ԱՐՏԱԿ ԱՍԱՏՐՅԱՆ

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԿԱՄՔԻ ԱՆՄԻՋԱԿԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՄԱՆ ՁԵՎԵՐԸ ՈՐՊԵՍ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՏԱՐՐ

ՀՀ Սահմանադրության 2-րդ հոդվածի համաձայն, ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է անմիջականորեն և պետական ու տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով: Այդպիսով, ամրագրվում է ժողովրդի կողմից իր իշխանության իրականացման ձևերի երկու հիմնական խմբեր՝ անմիջական և միջնորդավորված ժողովրդաիշխանության ձևեր՝ իշխանության մարմինների համակարգի միջոցով: Վերջին դեպքում խոսքը պետական իշխանության մարմինների համակարգի և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մասին է: Նշված ձևերի միասնությունը, փոխկապակցվածությունը, բարենպաստ զուգակցումը և գործառույթների իրականացումը կազմավորում է տեղական ինքնակառավարման համակարգը:

Տեղական ինքնակառավարման համակարգ ասելով հարկավոր է հասկանալ ինքնակառավարման մարմինների ամբողջությունը, միջհամայնքային միավորումները, քաղաքացիների կամքի ուղղակի արտահայտման ձևերը և տեղական ինքնակառավարման կազմակերպահիրավական իրականացման մյուս ձևերը, որոնց միջոցով համայնքի բնակչությունն իրագործում է ՀՀ Սահմանադրությամբ ճանաչված և երաշխավորված իշխանությունը, սեփական շահերից, պատմական և տեղական այլ ավանդույթներից ելնելով՝ լուծում տեղական նշանակության հարցեր:[1]

«Համակարգ» տերմինը (հուն. systema) մեկնաբանվում է որպես «պլան, ընդհանուրի մասերի դասավորման կարգ, նախանշված կառուցվածք, հաջորդականությամբ կապված ինչ-որ բանի ընթացք»[2]:

Գոյություն ունեն գիտնականների մի քանի տեսակետներ **«տեղական ինքնակառավարման համակարգ»** տերմինի մեկնաբանման շուրջ: Ս. Ի. Կուլիևան տեղական ինքնակառավարման համակարգի տակ առաջարկում է հասկանալ «միմյանց հետ փոխգործակցող ինքնակառավարվող համակար-

---

[1] Տես Հարությունյան Ա. Շ., Հայաստանի Հանրապետության մունիցիպալ իրավունք. Երևան, 2004, էջ 134-135:

[2] Даль В. И., Толковый словарь живого великорусского языка, М., 1998, էջ 188:

գերի ամբողջություն, որոնք հանդես են գալիս որպես բաղադրամասեր»[3]: Այլ կերպ են այս հարցին մոտենում Ի. Վ. Վիդրինը և Ա. Ն. Կոկոտովը: Նրանց կարծիքով՝ տեղական ինքնակառավարման համակարգը տեղական համայնքների բնակիչների, մունիցիպալ կազմավորումների, դրանց ներքին սուբյեկտների և ինստիտուտների ամբողջություն է, որոնք փոխգործակցում են միմյանց և արտաքին միջավայրի հետ՝ ինքնակառավարման գործառույթների իրականացման գործընթացում[4]: Ավելի ճիշտ է թվում Օ. Ե. Կուտաֆինի և Վ. Ի. Ֆադեևի տեսակետը, համաձայն որի՝ տեղական ինքնակառավարման մունիցիպալ կազմավորումների շրջանակներում տեղական ինքնակառավարման կազմակերպական ձևերի ամբողջությունն է, որոնց միջոցով ապահովվում է տեղական կյանքի, տեղական նշանակության հարցերի լուծումը[5]: Վերջիններիս կարծիքը կիսում են այլ հեղինակներ[6]: Տեղական ինքնակառավարման համակարգն ունի երեք բաղադրամաս. 1) բնակչության անմիջական կամահայտնության ձևերը, 2) տեղական ինքնակառավարման մարմինները, 3) միջհամայնքային միավորումները: Բնակչության կողմից տեղական ինքնակառավարման անմիջական իրականացման ձևերից առանձնացնենք տեղական հանրաքվեն, տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունները, տեղական ինքնակառավարման մարմիններին դիմելը, երթեր, ցուցեր, հանրահավաքներ անցկացնելը և այլն:

Հանրաքվեն (լատ. referendum – այն, ինչ պետք է ասվի)՝ քաղաքացիների ուղղակի կամահայտնություն է, որն իրականացվում է հասարակական կյանքի տարբեր կարևոր հարցերի շուրջ՝ քվեարկության միջոցով: Իրենց մասշտաբներով հանրաքվեները լինում են *համաժողովրդական*, որոնք ընդգրկում են երկրի ամբողջ տարածքը, և *լոկալ (տեղական)*, որոնք ընդգրկում են տարածքի որոշակի մասը: ՀՀ Սահմանադրության 107 հոդվածը նշում է, որ համայնքի անդամները կարող են ուղղակիորեն մասնակցել համայնքի գործերի կառավարմանը՝ համայնքային նշանակության հարցերը տեղական հանրաքվեով լուծելու միջոցով:

---

[3] Кулиева С. И., Местное самоуправление: конституционно-правовой статус и механизм функционирования, М., 1994, էջ 40:

[4] Տես Выарин И. В., Кокотов А. Н., Муниципальное право России, М., 2002, էջ 48:

[5] Տես Кутафин О. Е., Фадеев В. И., Муниципальное право Российской Федерации, М., 2004, էջ 137:

[6] Տես, օրինակ՝ Игнатов В. Г., Рудой В. В., Местное самоуправление в современной России, Ростов н/Д, 2001, էջ 76; Казанчев Ю. Д., Писарев А. Н., Муниципальное право России, М., 1998, էջ 78:

Սահմանադրական իրավունքի տեսության մեջ, ըստ արդյունքների բնույթի, ընդունված է հանրաքվեի երկու տարատեսակ պարտադիր և խորհրդակցական[7]: *Պարտադիր (որոշիչ)* հանրաքվեի դեպքում քվեարկության միջոցով մասնակիցների ընդունած որոշումն օժտված է անմիջական գործողությամբ և պետական որևէ մարմնի կողմից հաստատման կարիք չի զգում: *Խորհրդակցական* հանրաքվեն անցկացվում է ինչ-որ հարցի շուրջ մասնակիցների կարծիքը պարզելու համար: Դրա արդյունքները պարտադիր բնույթ չեն կրում և հաշվի են առնվում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց կողմից համապատասխան-նորմատիվ ակտեր ընդունելիս[8]: Խորհրդակցական հանրաքվեի մասին դրույթներ է պարունակում Սահմանադրության 110-րդ հոդվածը, որում ասվում է. «Համայնքները, հանրության շահերից ելնելով, կարող են օրենքով միացվել միմյանց կամ առանձնացվել: Ազգային ժողովը համապատասխան օրենքն ընդունում է կառավարության առաջարկով: Մինչև օրենսդրական նախաձեռնության ներկայացումը կառավարությունը համապատասխան համայնքներում նշանակում է տեղական հանրաքվեներ: Տեղական հանրաքվեների արդյունքները կցվում են օրենսդրական նախաձեռնությանը: Համայնքները կարող են միավորվել կամ բաժանվել՝ անկախ տեղական հանրաքվեների արդյունքներից»:

«Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքը[9] սահմանում է, որ տեղական հանրաքվեն տվյալ համայնքի բնակիչների համայնքային նշանակության կարևոր հարցերով քվեարկությունն է (հոդված 1): Տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունի համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող 18 տարին լրացած յուրաքանչյուր ոք: Նման ամրագրում օրենքն ստացավ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2006թ. նոյեմբերի 28-ին ընդունված «Տեղական հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքն[10] ընդունվելուց հետո: Նախքան փոփոխությունները, օրենքում նշվում էր, որ հանրաքվեն համայնքում հաշվառված ՀՀ քաղաքացիների համայնքային նշանակության կարևոր հարցերով քվեարկությունն է, իսկ հանրաքվեին մասնակցելու իրավունքը վերապահվում էր համայնքում հաշվառված, 18 տարին

---

[7] Տե՛ս, Հայաստանի Հանրապետության սահմանադրական իրավունք, Պատ. խմբ. Ն. Ա. Այվազյան, Երևան, «Տիգրան Մեծ», 2003, էջ 135:
[8] Տե՛ս, Чиркин В. Е., Конституционное право России, М., Юристъ, 2003, էջ 266:
[9] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2002/11 (186), 01.04.02:
[10] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 29.12.06./69 (524):

լրացած ՀՀ քաղաքացիներին և փախստականներին: Կատարված փոփոխությունը տեղին է և ճիշտ, բխում է ՀՀ Սահմանադրության մի շարք դրույթների պահանջներից: Մասնավորապես, տեղական ինքնակառավարումը համայնքի իրավունքն ու կարողությունն է ... լուծելու տեղական նշանակության հարցերը (հոդված 104), համայնքը մեկ կամ մի քանի բնակավայրերի **բնակչության** հանրությունն է (հոդված 104.1) (այդ հանրության մեջ կարող են լինել ինչպես ՀՀ քաղաքացիներ և փախստականներ, այնպես էլ օտարերկրացիներ և քաղաքացիություն չունեցող անձինք), օրենքով կարող է սահմանվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող անձանց՝ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին և տեղական հանրաքվեներին մասնակցելու իրավունքը (հոդված 30):

Միանգամայն ճիշտ է նաև, որ օրենքի նոր խմբագրությամբ 3-րդ հոդվածում բացակայում է դրույթը, որով նախատեսվում էր, որ տեղական հանրաքվեի նախապատրաստման և անցկացման ընթացքում արտասահմանում բնակվող կամ գտնվող՝ տեղական հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձինք տեղական հանրաքվեին մասնակցում են հավասար հիմունքներով, օրենքով և հանրաքվեի մարզային հանձնաժողովի սահմանած կարգով: Օրենքի այս դրույթը փոխառնված էր «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքից[11] և դրա գործնական կիրառման ժամանակ որոշակի խնդիրներ կառաջանային: «Հանրաքվեի մասին» ՀՀ օրենքում դրա առկայությունը միանգամայն արդարացված է: Համապետական հանրաքվեի ժամանակ լուծվում են համապետական կարևոր հարցեր և ՀՀ տարածքից դուրս գտնվող քաղաքացիների մասնակցությունը այդ հանրաքվեին հասկանալի է և ճիշտ: Ինչ վերաբերում է տեղական հանրաքվեին, ապա այս դեպքում հանրաքվեի անցկացման տարածքը սահմանափակվում է տվյալ համայնքով և արտասահմանում բնակվող կամ գտնվող համայնքի բնակիչների համար տեղամասեր բացելը նպատակահարմար չէ և գործնականում կարող էր բազմաթիվ խոչընդոտներ առաջացնել: Տեղական հանրաքվեին չեն կարող մասնակցել դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները (հոդված 3):

Տեղական հանրաքվեի՝ որպես տեղական ինքնակառավարման իրականացման կարևորագույն ձևի մասին է վկայում այն հանգամանքը, որ համայնքի

---

[11] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2001/32 (164), 18.10.01

ավագանու և ղեկավարի հետ մեկտեղ տեղական հանրաքվե անցկացնելու նախաձեռնության իրավունք ունեն նաև այդ հանրաքվեին մասնակցելու իրավունք ունեցող անձինք (հոդված 7):

Հաշվի առնելով, որ տեղական հանրաքվեի շրջանակները որոշվում են տարածքի տեղայնականությամբ, միայն տեղական նշանակության հարցերի լուծմամբ և դրան միայն տվյալ տարածքի բնակիչների մասնակցությամբ՝ կարելի է տալ հետևյալ սահմանումը. «Տեղական հանրաքվեն ՀՀ օրենսդրությամբ տեղական ինքնակառավարման իրավասությանը վերապահված տեղական նշանակության կարևորագույն հարցերի լուծման կամ քննարկման ուղղությամբ քվեարկության միջոցով համայնքի բնակչության ուղղակի կամահայտնություն է»: Տեղական հանրաքվեում մասնակիցների ընդունած որոշումները տարածվում են և ուժ ունեն միայն տվյալ տարածքի սահմաններում:

Տեղական ինքնակառավարման իրականացման հաջորդ կարևոր ձևը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն են:

Ընտրությունները անմիջական ժողովրդական կամահայտնության առավել զանգվածային ձևեր են: Ընտրությունների միջոցով ձևավորվում են տեղական ինքնակառավարման ներկայացուցչական մարմինները, որոնց միջոցով բնակչությունն իրականացնում է տեղական ինքնակառավարում:

Տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններին է նվիրված ՀՀ ընտրական օրենսգրքի 6-րդ բաժինը[12]: Ընտրական օրենսգիրքը պահանջում է, որ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվեն ընդհանուր, հավասար, ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:

2005թ. սահմանադրական հանրաքվեից հետո կատարված օրենսդրական փոփոխություններն անդրադարձել են նաև ընտրական օրենսգրքին: Այսպես, 2006թ դեկտեմբերի 22-ին ՀՀ Ազգային ժողովի կողմից ընդունված «ՀՀ ընտրական օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքով[13] սահմանվեց, որ ՀՀ-ում ընտրելու իրավունք ունեն 18 տարին լրացած ՀՀ քաղաքացիները, իսկ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների ժամանակ համապատասխան համայնքում առնվազն մեկ տարվա հաշվառում ունեցող և փաստացի բնակվող յուրաքանչյուր ոք: Ընտրել և ընտրվել չեն կարող դատարանի վճռով անգործունակ ճանաչված, ինչպես

---

[12] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 18.02.99./2 (68):
[13] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 17.01.07./ 4 (528):

նաև դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռով ազատազրկման դատապարտված և պատիժը կրող քաղաքացիները: ՀՀ-ում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն անցկացվում են մեծամասնական ընտրական համակարգի հիման վրա: Համայնքի ղեկավարի ընտրության ժամանակ համայնքի տարածքում կազմավորվում է միամանդատ մեծամասնական ընտրատարածք: Համայնքի ավագանու ընտրության ժամանակ համայնքի տարածքում կազմավորվում է մեկ բազմամանդատ մեծամասնական ընտրատարածք (ՀՀ ընտրական օրենսգիրք, հոդված 120): Բազմաթիվ հեղինակներ ընդգծում են ընտրությունների սոցիալ-քաղաքական նշանակությունը: Այսպես, Ա. Ե. Պոստնիկովը գտնում է, որ ընտրություններն ապահովում են պետական և տեղական իշխանության վերարտադրությունը, նորացումը ժողովրդավարական հիմքի վրա՝ քաղաքացիական հասարակության կողմից ձևավորվող առավել նշանակալի քաղաքական շահերին համապատասխան[14]:

Իրավական և սոցիալ-քաղաքական բնութագրիչների ամբողջությունը թույլ է տալիս առանձնացնել տեղական ընտրությունների հետևյալ հիմնական գծերը. 1) ուղղակի ժողովրդավարության, բնակիչների անմիջական կամահայտնության և հանրային կադրային որոշումների ընդունման հիմնական ինստիտուտներից մեկն է, 2) կապում են ներկայացուցչական և ուղղակի ժողովրդավարության ինստիտուտները, 3) թույլ են տալիս բնակիչներին անմիջականորեն մասնակցել իրենց մունիցիպալ կազմավորման գործերի կառավարմանը, իրականացնել իրենց սահմանադրական իրավունքները, ազատությունները, ընդ որում՝ ոչ միայն նրանք, ովքեր անմիջականորեն կապված են ընտրական տեխնոլոգիայի հետ, 4) իրենցից ներկայացնում են համամունիցիպալ միջոցառում (իրենց մասշտաբներով, տեղական բնակչության տարբեր շերտերի լայն մասնակցությամբ), 5) քաղաքացիական հասարակության կառուցման դեր են կատարում՝ հանդես գալով որպես տարբեր խմբերի տեսակետների, շահերի արտահայտումը սնուցող միջոց և միաժամանակ այդ խմբերի կողմից փոխզիջումային որոշումների որոնման միջոց[15]:

Տեղական ինքնակառավարմանը բնակչության մասնակցության կարևորագույն ձևերից է իշխանության մարմիններին ու դրանց պաշտոնատար անձանց դիմելը: Որպես կանոն, տեղական ինքնակառավարման մարմիններին

---

[14] Տես Постников А. Е., Избирательное право России, М., 1996, էջ 21:

[15] Ընտրությունների այս գծի մասին մանրամասն տես՝ Кабышев В. Т., Выборы и избирательное право в Российской Федерации: тенденции развития и совершенствования // Реализация Конституции России: Межвуз. науч. сб., Саратов, 1994, էջ 5, 8:

դիմելը քաղաքացիների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին հասցեագրված առաջարկությունների, դիմումների, բողոքների և միջնորդությունների ընդհանրացված անվանումն է: ՀՀ Սահմանադրության 27.1 հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական կամ հասարակական շահերի պաշտպանության նկատառումներով իրավասու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց դիմումներ կամ առաջարկություններ ներկայացնելու և ողջամիտ ժամկետում պատշաճ պատասխան ստանալու իրավունք: Սահմանադրական այս իրավունքն իր մանրամասն կարգավորումն է գտել «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքում[16] և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքում[17]: Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին օրենքի 3-րդ հոդվածն ամրագրում է, որ քաղաքացիները, իրավաբանական անձինք իրենց առաջարկությունները, ժամանակին և օրենքով սահմանված կարգով քննարկելու նպատակով, տալիս են այն պետական մարմիններին, տեղական ինքնակառավարման մարմիններին, դրանց պաշտոնատար անձանց, կազմակերպություններին, որոնց անմիջական տնօրինությանն է վերապահված տվյալ հարցի լուծումը: Քաղաքացու գրավոր առաջարկությունը պետք է ստորագրված լինի՝ նշելով դիմումատուի ազգանունը, անունը, հայրանունը, բնակության, աշխատանքի կամ ուսումնական հաստատության հասցեն: Առանց հիշյալ տեղեկությունների՝ առաջարկությունը, դիմումը, բողոքը համարվում է անստորագիր, չի քննարկվում և սահմանված կարգով ոչնչացվում է: Առաջարկությունը չի քննարկվում նաև այն դեպքում, եթե պարզվում է, որ դրա հեղինակի ինքնությանը վերաբերող տվյալները կեղծ են (հոդված 2):

Ինչ վերաբերում է դիմումներին և բողոքներին, ապա Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքը դրանց ներկայացնում է հետևյալ պահանջները՝ դիմումը պետք է ներկայացվի գրավոր և պարունակի ա) դիմողի անունը, ազգանունը, իրավաբանական անձի դեպքում՝ նրա լրիվ անվանումը, բ) դիմողի հասցեն (իրավաբանական անձի գտնվելու վայրը), գ) վարչական մարմնի անվանումը, որին ներկայացվում է դիմումը, դ) դիմումով ներկայացվող պահանջը (դիմումի առարկան), ե) դիմումին կցվող փաստաթղթերի ցանկը (եթե այդպիսիք ներկայացվում են), զ) դիմումը կազմելու

---

[16] ՀՀ պաշտոնական տեղեկագիր, 27.12.99./31(97): «Քաղաքացիների առաջարկությունները, դիմումները և բողոքները քննարկելու կարգի մասին» ՀՀ օրենքը 2004թ. դեկտեմբերի 31-ից ուժը կորցրած է ճանաչվել դիմումների և բողոքների մասով:

[17] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 31.03.04./18(317):

տարին, ամիսը և ամսաթիվը, է) դիմողի ստորագրությունը, իսկ իրավաբանական անձի դեպքում՝ նրա իրավասու պաշտոնատար անձի ստորագրությունը և իրավաբանական անձի կնիքը (հոդված 31): Գրեթե նույն պահանջներն են ներկայացվում նաև բողոքին: Ի հավելումն նշվածների՝ բողոքում պետք է նշվի նաև այն վարչական մարմնի անվանումը, որին ներկայացվում է բողոքը (հոդված 72): Վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ (հոդված 46): Վարչական վարույթի մասնակիցների իրավունքներն ու պարտականությունները և վարչական վարույթի հետ կապված մյուս հարցերը մանրամասնորեն կարգավորվում են Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին օրենքով:

Բնակչության կողմից տեղական ինքնակառավարման անմիջական իրականացման ձևերից է ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելը: ՀՀ Սահմանադրության 29-րդ հոդվածն ամրագրում է, որ յուրաքանչյուր ոչ ունի խաղաղ, առանց զենքի հավաքներ անցկացնելու իրավունք: Սահմանադրական այս իրավունքը մինչև 2005թ. սահմանադրական հանրաքվեն քաղաքական բնույթ ուներ, այսինքն՝ պատկանում էր միայն ՀՀ քաղաքացիներին: Հանրաքվեով կատարված փոփոխություններից հետո այն դասվեց անձնական (քաղաքացիական) իրավունքների շարքը: Այս ոլորտում ծագող հարաբերություններն իրենց մանրամասն կարգավորումն են գտել «Ժողովներ, հանրահավաքներ, երթեր և ցույցեր անցկացնելու մասին» ՀՀ օրենքում[18]: Օրենքում օգտագործվում է «հրապարակային միջոցառում» ընդհանրական հասկացությունը, որի տակ հասկացվում է ընդհանուր օգտագործման տարածքներում տնտեսական, սոցիալական, քաղաքական, հոգևոր կամ այլ պահանջների, խնդիրների ու հարցերի վերաբերյալ իրենց կարծիքն արտահայտելու, տեղեկություններ կամ գաղափարներ փնտրելու, ստանալու կամ տարածելու նպատակով անցկացվող խաղաղ և յուրաքանչյուրի մասնակցությունն ապահովող ժողովներ, հանրահավաքներ, երթեր (շքերթներ) կամ ցույցեր (այդ թվում՝ նաև նստացույցեր): Ժողովը, հանրահավաքը, ցույցը օրենքում սահմանվում է որպես մեկ վայրում անցկացվող միջոցառում: Երթը մեկ վայրից մյուսը շարժվելու միջոցով իրականացվող միջոցառում է: Երթը կարող է իրականացվել նաև տրանսպորտային միջոցներով (հոդված 2): Այս

[18] Հայաստանի Հանրապետության պաշտոնական տեղեկագիր, 2004/26 (325), 12.05.04:

հասկացությունների սահմանման մեջ հստակություն չկա: Դրանց սահմանազատումը հաճախ պայմանական է (ժողով-հանրահավաք, երթ-ցույց): Անմիջական ժողովրդավարության այս ձևերը տեղական ինքնակառավարման համակարգում օգտագործվում են տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց ուշադրությունը լուծում պահանջող սոցիալ-տնտեսական և մշակութային զարգացման խնդիրների, շրջակա միջավայրի պահպանության հարցերի վրա հրավիրելու նպատակով: Հանրահավաքների ժամանակ քաղաքացիներն իրավունք ունեն քննարկելու տեղական նշանակության ցանկացած հարց և դրանց շուրջ ընդունել համապատասխան բանաձևեր: Բանաձևերը կարող են ուղարկվել տեղական ինքնակառավարման մարմիններին և պաշտոնատար անձանց: ընդ որում, դրանք կրում են խորհրդատվական բնույթ: Դրանցում բովանդակված պահանջները և առաջարկությունները կարող են հաշվի առնվել տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների և մյուս փաստաթղթերի նախագծերի նախապատրաստման ժամանակ:

Ամփոփելով վերոգրյալը և հաշվի առնելով ՀՀ-ում ձևավորված իրողությունները՝ կարող ենք նշել, որ ՀՀ-ում տեղական ինքնակառավարման համակարգում բնակչության կամքի անմիջական արտահայտման ձևերի շարքում հիմնականը տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն են: Նշենք նաև, որ Հայաստանում դեռ տեղական հանրաքվե չի անցկացվել, իսկ մյուս ձևերի սահմանափակ կիրառումը խոսում է այն մասին, որ տեղական ինքնակառավարումը գտնվում է ոչ թե զարգացման, այլ դեռ կայացման փուլում, որ Հայաստանում բացակայում են տեղական ինքնակառավարման ձևավորված ավանդույթներ: Կարծում ենք, ճիշտ կլիներ, արտասահմանյան պետությունների փորձն ուսումնասիրելով, օրենսդրության մեջ ներմուծել այդ երկրներում բնակչության կողմից տեղական ինքնակառավարման անմիջական իրականացման այն ձևերը, որոնք ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգում կարող են հաջողությամբ իրականացվել և պայմաններ ստեղծել արդեն իսկ գոյություն ունեցող ձևերի առավել արդյունավետ կիրառման համար: